



ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը և Ռուսաստանի Գիտության և մշակույթի կենտրոնը համատեղ կազմակերպում են միջպետական ինովացիոն համագործակցության թեմայով **գործարար հանդիպում**, որը կկայանա **2018թ. նոյեմբերի 7-ին ժամը 11:00-ին** :

Հանդիպումը կկայանա կլոր սեղանի ձևաչափով, որի նպատակն է մասնագիտական խմբերի՝ նորարարների, գիտնականների, ուսումնական հաստատությունների և պետական մարմինների կողմից նորարարության ոլորտի համակարգողների, ինչպես նաև նորարարության ոլորտում լայն փորձ և մտահորիզոն ունեցող այլ անձանց գործունեության ձևավորման և ապահովման խնդիրների քննարկումը:

Հանդիպումը կազմակերպվում և անցկացվում է «ԱՊՀ մասնակից պետությունների՝ ինովացիոն ոլորտում մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածի համագործակցության միջպետական ծրագրի» միջոցառումների իրականացման շրջանակներում:

Հանդիպմանը որպես զեկուցող մոդերատորներ հանդես կգան «Նորարարությունների առևտրայնացման միջազգային բյուրո» ԲԲԸ գլխավոր տնօրեն տնտ. գիտ. թեկնածու Սերգեյ Յուրիի Իսաևը և «Տեղեկատվական և ինտելեկտուալ տեխնոլոգիաների ներդրում» ՄՊԸ զարգացման տնօրեն, երիտասարդական քաղաքականության փորձագետ Դմիտրի Եվգենիի Սապեգինը:

Կլոր սեղանի ընթացքում քննարկվող հարցերի շրջանակում հատուկ կարևորություն կտրվի հետևյալ խնդիրներին.

- Նոր տեխնոլոգիաների և սթարթափերի ստեղծման ընդհանուր միասնական հարթակի ձևավորման մոտեցումներ:
- Մարքավորումների համատեղ կիրառում. ենթակառուցվածքային փոխգործունեության հիմնախնդիրներ և սահմանափակումներ:
- ԱՊՀ երկրների նոր գլոբալ և ներքին շուկաների ձևավորման ընդհանուր սկզբունքներ:
- Նոր տեխնոլոգիաների և տեխնոլոգիական հարթակների ձևավորման հիմնական մոտեցումներ:
- «ԱՊՀ մասնակից պետությունների՝ ինովացիոն ոլորտում մինչև 2030 թվականն ընկած ժամանակահատվածի համագործակցության միջպետական ծրագրի» բացթողումների, նպատակների, խնդիրների, ռեսուրսների, ընթացակարգերի և այլնի նկարագրություն: Միջպետական ծրագրի հայեցակարգի շուրջ առաջարկությունների ներկայացում:



Գործարար միջոցառումը կոչված է նպաստելու «ԱՊՀ մասնակից պետությունների՝ ինովացիոն ոլորտում մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածի համագործակցության միջպետական ծրագրի» իրականացման հիմնական մեխանիզմների, գործիքների, նոր տեխնոլոգիական նախագծերի առևտրայնացման գործուն համակարգի, ինչպես նաև ֆինանսական, նյութական և աշխատանքային միասնական ռեսուրսների հստակեցմանն ու որոշակիացմանը՝ միջպետական ինովացիոն համագործակցության ոլորտում առավել արդյունավետ դրանք կիրառելու նպատակով:

Միջոցառումը տեղի կունենա «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ում (ք. Երևան, Կոմիտասի պող. 49/3, փոքր դահլիճ, 2-րդ հարկ):

Հետաքրքրության դեպքում խնդրում ենք հաստատել Ձեր մասնակցությունը միջոցառմանը մինչև 06.11.2018թ.՝ ուղարկելով էլեկտրոնային նամակ transfer@innovcentre.am, development@innovcentre.am կամ innovsupport@innovcentre.am էլեկտրոնային փոստի հասցեներին կամ զանգահարելով ստորև նշված հեռախոսահամարներով՝ 011 236554, 011 238747: